**Մասնագիտությունների կրթական ծրագրերի** համապատասխանությունը հաստատության առաքելությանը և ռազմավարական պլանին

| | Առաքելության հիմնական **<u>տարրերը</u>** | ԵՊՀ ԻՄ-ի առաքելությունը<br>ԵՊՀ ԻՄ զարգացման<br>**<u>ռազմավարական պլանավորումը</u>**<br>(ՌԾ 2016-2020 թթ․) | ՄԿԾ-ի **<u>համահունչությունը</u>** հաստատության առաքելության հետ | | |
|---|---|---|---|---|---|
| | | | **«Ֆինանսներ (ըստ ոլորտի)»**<br>/041201․01․6/ | **«Պատմություն»**<br>/022201․01․6/<br>http://ijevan.ysu.am/wpcontent/uploads/2013/06/Patm_-2019.pdf | **«Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա»**<br>/061101․02․6/<br>http://ijevan.ysu.am/wpcontent/uploads/2013/06/IKM-2019-.pdf |
| 1 | Հաստատու-թյան գործունեու-թյան տիրույթ | • ազգային աշխատաշուկա<br>• տարածաշրջանի աշխատաշուկա<br>**<u>մասնագիտական ոլորտներ՝</u>** հասարակական, սոցիալ-տնտեսական և բնական գիտություններ, հայագիտու-թյուն, մանկավարժություն, մշակույթ և արվեստ։<br><br>**<u>Նպատակ 1.</u> Որակյալ կրթություն**<br>Տրամադրել աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ բարձրորակ կրթական ծրագրեր՝ միտված շրջանավարտների աշխատանքային գործունակության բարելավմանը, բարձրացնել ուսանողների բավարարվածության մակարդակը ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից։<br>**<u>Նպատակ 4.</u> Մարդկային որակյալ ռեսուրսներ**<br>Զարգացնել դասախոսական կազմի ներուժը, մարդկային ռեսուրսների կառավարման համակարգը և բարձրացնել աշխատողների բարեկեցության մակարդակը։<br>**<u>Նպատակ 5.</u> Որակյալ ենթակառուցվածքներ**<br>Ձևավորել կրթական ծրագրերի իրականացման պահանջները բավարարող համալսարանական | **<u>մասնագիտական ոլորտներ՝</u>** բիզնես, բանկերի, կազմակերպությունների կառավարում, հան-րային կառավարում<br>**<u>գործունեության տիրույթ՝</u>**<br>• տնտեսության տարբեր ոլորտների ձեռնար-կություններ, առևտրային բանկեր,<br>• խորհրդատվական ընկերություններ,<br>• պետական կառավարման և տեղական ինք-նակառավարման մարմիններ<br>**<u>Ծրագրի շրջանավարտները կարող են</u>** զբաղեց-նել հետևյալ պաշտոնները.<br>*<u>Կրթական համակարգում</u>*<br>• ֆինանսների, բանկային մենեջմենթի, հաշվապահական հաշվառման դասախոս,<br>*<u>Խորհրդատվական ընկերություններում</u>*<br>▪ ֆինանսական խարհրդատու,<br>▪ վիճակագրական տվյալների վերլուծաբան,<br>*<u>Ձեռնարկություններում</u>*<br>▪ ֆինանսական վերլուծաբան,<br>▪ տնտեսագետ,<br>▪ հաշվապահ,<br>*<u>Առևտրային բանկերում</u>*<br>▪ վարկային մասնագետ,<br>▪ ռիսկերի կառավարման մասնագետ,<br>▪ հաշվապահ,<br>▪ ակտիվների և պասիվների կառավարման մասնագետ<br>*<u>Պետական կառավարման և տեղական ինքնա-կառավարման մարմիններում</u>*<br>• ֆինանսիստ, հաշվապահ, տնտեսագետ,<br>• վիճակագրական տվյալների վերլուծաբան,<br>• տնտեսական քաղաքականության ծրագրերի մշակման խմբի անդամ,<br>• տնտեսական նախագծերի մշակման, դրանց արդյունավետության գնահատման և իրակա- | **<u>մասնագիտական ոլորտներ՝</u>** գիտական - հետազոտություններ, կրթություն-ման-կավարժություն, լրատվություն, կառավարում<br>**<u>գործունեության տիրույթ՝</u>**<br>• միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ,<br>• թանգարաններ, արխիվներ,<br>• ռադիո, հեռուստատեսություն և մամուլ<br>• տուրիզմի ոլորտ,<br>• ՀՀ Կրթության, գիտության, սպորտի և մշակույթի նախարարություն, Ազգային անվտանգության ծառայություն,<br>• տեղական ինքնակառավարման մարմիններ։<br>**<u>Ծրագրի շրջանավարտները կարող են</u>** զբաղեցնել հետևյալ պաշտոնները.<br>*<u>Թանգարաններում</u>*<br>• էքսկուրսավար,<br>• գիտաշխատող,<br>• բաժնի վարիչ, տնօրեն։<br>*<u>Արխիվներում</u>*<br>• գիտաշխատող,<br>• բաժնի վարիչ,<br>• տնօրեն։<br>*<u>Ռադիոյում, հեռուստատեսությունում, մամուլում</u>*<br>▪ լրագրող<br>▪ վերլուծաբան։<br>*<u>Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում</u>*<br>• ստորին և միջին օղակների ծառայող։<br>Մանկավարժի որակավորման համար լրացուցիչ կրթություն ստանալու դեպքում կարող է աշխատել նաև դպրոցում՝ | **<u>մասնագիտական ոլորտներ՝</u>**<br>ծրագրավորում, տեղեկատվական բազա-ների ստեղծում, արդյունքների վիճակագ-րական վերլուծություն, արտադրանքի վե-րահսկում<br>**<u>գործունեության տիրույթ՝</u>**<br>• տեղեկատվական տեխնոլոգիաների բազմաբնույթ ոլորտներում գործող պետա-կան և մասնավոր հիմնարկներ, կազմա-կերպություններ և ձեռնարկություններ,<br>• բուհեր,<br>• ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմա-տացման պրոբլեմների ինստիտուտ,<br>• տեղական ինքնակառավարման մարմիններ։<br>**<u>Ծրագրի շրջանավարտները կարող են</u>** զբա-ղեցնել հետևյալ պաշտոնները.<br>*<u>Գիտահետազոտական ինստիտուտներում</u>*<br>• լաբորանտ,<br>• ծրագրավորող,<br>• կրտսեր գիտաշխատող։<br>*<u>Պետական և մասնավոր հիմնարկներում</u>*<br>• տեղեկատվական բազաներ ստեղծող մասնագետ,<br>• արդյունքների վիճակագրական վերլու-ծությունների մասնագետ,<br>• ծրագրավորող,<br>• արտադրանքի վերահսկման բաժինների ծրագրային մասնագետ։<br>*<u>Լրացուցիչ մանկավարժական դասընթացներ անցնելուց հետո</u>*<br>ՀՀ ԿԳՆ ավագ, հիմնական և միջնակարգ դպրոցներում որպես ինֆորմատիկայի ուսուցիչ։ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | ենթակառուցվածքներ: | նացման վերահսկողության գծով մասնագետ:<br>**Ծրագրի շրջանավարտները** կարող են իրենց ուսումը շարունակել ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի մագիստրատուրայում: | ուսուցիչ:<br>**Ծրագրի շրջանավարտները** կարող են իրենց ուսումը շարունակել ԵՊՀ պատմության ֆակուլտետի մագիստրատուրայում: | **Ծրագրի շրջանավարտները** կարող են շարունակել իրենց ուսումը մագիստրատուրայում: |
| 2 | Ձեռքբերվող արդյունքներ և շնորհվող որակավորումներ | **շնորհվող որակավորումներ՝** բակալավր, մագիստրոս,<br>**ձեռքբերվող արդյունքներ՝** տեսական և կիրառական համապատասխան մասնագիտական գիտելիքներ, կարողություններ և հմտություններ<br>**խնդիրներ՝**<br>• Ուսանողներին առաջարկել համակողմանի գիտելիք, կարողություններ և հմտություններ ապահովող կրթական ծրագրեր,<br>• Դաստիարակել ուսանողներին բարոյական, ազգային և համամարդ-կայի արժեքների ոգով<br>• Հասարակության տարբեր շերտերին ընձեռել մատչելի և ընտրության լայն հնարավորություններ,<br>• Տրամադրել բարձրորակ կրթություն, ուսանողներին և աշխատակիցներին ապահովել ժամանակակից ենթակառուցվածքներով և պայմաններով,<br>• Բոլոր բնագավառներում ապահովել որակի անընդհատ բարելավում: | **շնորհվող որակավորում՝** տնտեսագիտության բակալավր<br>**ձեռքբերվող արդյունքներ՝**<br>• տնտեսագիտության, ֆինանսների և նրանց հաշվառման, բանկային գործունեության հիմնական սկզբունքների, վիճակագրության վերաբերյալ հիմնարար գիտելիքներ և իմացություն,<br>• ֆինանսական որոշումներ կայացնելու, կազմակերպության ֆինանսների կառավարման արդյունավետությունը գնահա-տելու, բանկային հատվածի վարկային և ակտիվային գործառույթներ իրականաց-նելու մասնագիտական կարողություններ,<br>• տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ մասնագիտական տվյալներ հավաքագրելու և քանակական ու որա-կական վերլուծություն իրականացնելու, տեղեկատվությունը հանրությանը ներկայացնելու կարողություններ,<br>• մասնագիտական միջավայրում գրավոր և -բանավոր հաղորդակցվելու, խմբի կազմում աշխատելու և որոշումներ կայացնելու կարողություններ: | **շնորհվող որակավորում՝** պատմության բակալավր<br>**ձեռքբերվող արդյունքներ՝**<br>• հայոց և համաշխարհային պատմության, արդի պատմագիտության, դրանց զարգացման օրինաչափության, պատմության գնահատման մեթոդաբանության վերաբերյալ հիմնարար գիտելիքներ և իմացություն,<br>• պատմագիտության ոլորտին առնչվող տեղեկատվությունը, գաղափարները, փաստարկները, հայոց և համաշխարհային պատմության հարցերը, պատմագիտական հետազոտությունների արդյունքները ներկայացնելու, մեկնաբանելու, վերլուծելու մասնագիտական կարողություններ,<br>• սոցիալ-տնտեսագիտական գիտելիքների և մեթոդների կիրառմամբ մասնագիտական և հասարակական խնդիրները լուծելու կարողություններ,<br>• գիտական և մանկավարժական բնագավառներում թիմային և ինքնուրույն աշխատելու, նաև ղեկավարելու, ժողովրդավարական սկզբունքները իրագործելու, ազգային և համամարդկային արժեքները տարածելու կարողություններ: | **շնորհվող որակավորում՝** ինֆորմատիկայի բակալավր<br>**ձեռքբերվող արդյունքներ՝**<br>• ծրագրավորման ժամանակակից սկզբունքների և արդի տեխնոլոգիաների, ծրագրավորման լեզուների և նրանց առանձնահատկությունների, գիտական և տնտեսական տարբեր ոլորտներում ծրագրային համակարգերի կիրառման վերաբերյալ գիտելիքներ և իմացություն,<br>• տարբեր իրավիճակներում մասնագիտական խնդիրներ լուծելու, նրանց համար մաթեմատիկական մոդելներ կառուցելու և ծրագրավորելու հմտություններ,<br>• համակարգչային և տեղեկատվական ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ բիզնես խնդիրներ լուծելու կարողություններ,<br>• մասնագիտական ոլորտի արդի խնդիրների իրականացման ժամանակ թիմում աշխատելու, պատասխանատվություն կրելու, լուծումներ առաջարկելու և պաշտպանելու կարողություններ: |
| 3 | Դասավանդման և ուսումնառության մոտեցումներ | • ուսանողամետ ուսուցում,<br>• բարձրակարգ գիտամանկավարժական կազմ,<br>• ակադեմիական ազատություն և ազնվություն,<br>• ժողովրդավարական միջավայր,<br>• արդիականացված նյութական ռեսուրսներ,<br>• բավարարված ներքին և արտաքին շահակիցներ | **Դասավանդման և ուսումնառության գործընթացի արդյունավետ իրականացման համար կիրառվում են.**<br>• հաստատված կրթական ծրագրեր,<br>• ճկուն ուսումնական պլաններ,<br>• դասընթացների փաթեթներ (պորտֆոլիոներ),<br>• տեղեկատվական տարբեր տեխնոլոգիաներ,<br>• ժամանակակից սարքավորումներով և ծրագրային միջոցներով ապահոված համակարգչային լսարաններ,<br>• ինտերնետային կապով համակարգչային սրահներ,<br>• հեռաուսուցմամբ և առցանց դասախոսությունների իրականացման միջոցներով ապահոված լսարան (on-line լսարան),<br>• գրականության էլեկտրոնային ռեսուրսներ,<br>• ազգային և միջազգային փորձի ուսումնասիրություններ: | | |